ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-28-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անուն, ազգանունը՝ Գուրգեն Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (ք. Կրասնոյարսկ), 2022թ. նոյեմբերի 24-28-ը

4. Հրավիրող կողմը՝ ՌԴ ԱԳ նախարարության Երիտասարդ դիվանագետների խորհուրդ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն ԵԱՏՄ երիտասարդ պետական ծառայողների համաժողովին՝ փորձի փոխանակման կապերի ամրապնդման նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

- ԵԱՏՄ անդամ երկրների միջև երիտասարդ պետական ծառայողների համագործակցության ամրապնդում, փորձի փոխանակման հարթակների ստեղծում
- Միասնական նախագծերի ստեղծում, որոնք օգտակար կլինեն միության համար

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում ձևավորվել են աշխատանքային խմբեր՝ երեք հիմնական ուղղություններով քննարկումներ իրականացնելու նպատակով: «Թվային վերափոխում» ուղղության աշխատանքային խմբի կազմում մասնակցել եմ պետական որոշ գործառույթների թվայնացման վերաբերյալ քննարկմանը: Մասնավորապես, քննարկումներ են ծավալվել քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային համակարգի

ստեղծման անհրաժեշտության, ինչպես նաև հանրային ֆինանսների կառավարման շրջանակում թվային լուծումների վերաբերյալ:

8. Հանդիպման արդյունքները և առաջարկությունները

Հանդիպման արդյունքում ձևավորվել են նոր գործընկերային կապեր, քննարկվել են աշխատանքային խմբերի կողմից ներկայացված առաջարկություններ, ինչպես նաև ձեռք է բերվել նման հանդիպումները շարունակական դարձնելու վերաբերյալ պայմանավորվածություն:

9. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ Գուրգեն Սարգսյան

Ստորագրությունը, ամսաթիվը **30.11.2022թ.**